1700-ԱՄՅԱԿԻ ԳՈՐԾԱԴԻՐ ՄԱՐՄՆԻ ԺՈՂՈՎ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

Քրիստոնեությունը Հայաստանի պետական կրոն հռչակման 1700-ամյակի Եկեղեցական հանձնաժողովի Գործադիր մարմնի հերթական ժողովը հրավիրվեց հուլիսի 13-15-ը, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում՝ մասնակցությամբ Գործադիր մարմնի անդամ թեմական առաջնորդների, Կիլիկիո Աթոռի ներկայացուցիչների, հանձնախմբերի նախագահների, աշխարհական անդամների:

Բացելով առաջին նիստը՝ Գործադիր մարմնի ատենապետ Տ. Մեսրոպ արքեպս. Գրիգորյանը հրապարակեց Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի ողջույնի ուղերձն ու օրհնության խոսքը:

Ժողովն այնուհետև լսեց 1700-ամյակի գրասենյակի վարիչ-քարտուղար Տ. Հովնան արքեպս. Տերտերյանի ջորսամսյա աշխատանքի հաշվետվությունը, հրատարակչական, թատերա-երաժշտական, գեղարվեստական հանձնախմբերի զեկույցները, ինչպես նաև Երևանի Մայր եկեղեցու շինարարության, 1700-ամյակի շրջանակներում նախատեսված ցուցահանդեսների նախապատրաստման ընթացքի մասին տեղեկատվությունը, քննարկեց 1700-ամյակի առթիվ ծրագրված առանցքային համարվող 7 միջոցառումների անցկացման հետ կապված մի շարք հարցեր:

Գործադիր մարմնի ժողովը նաև վավերացրեց հանձնաժողովների աշխատանքների ուղեցույցները, նախանշեց 1700-ամյակի Եկեղեցական և Պետական հանձնաժողովների համագործակցության ուղղությունները հոբելյանական տարվա նախաշեմին: